

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հոգեւորականութեան համար նոր օրինագիծ Սպանիայում

Նոյեմբ. 4-ին ն. տ. Սպանիական սենատը 149 ձայնով
ընդդէմ 85-ի ընդունեց կանալիխասի օրինագիծը, այն է
մինչև կրօնական հաստատութիւնների համար նոր օրէնք
հաստատելը, Սպանիայում արդելել նոր կարգերը (օրդէն)՝
և միաբանութիւնները։ Սենատում՝ ներկայ եղող եպիսկո-
պոսներն ու պահպանողականներից ոմանք յամառ ընդ-
դիմութիւն ցոյց տուին։ Կանալիխասը անհրաժեշտ է հա-
մարում այդ օրէնքը, պետութեան հեղինակութիւններ-
քին քաղաքականութեան մէջ ամրապնդելու համար, և թէ
առանց այն էլ երկրում բաւական շատ միաբանութիւններ
կան։ Պահպանողական սենատորները կարողացան օրէնքի
մէջ մի յաւելումն անել, այն է, որ նա պէտք է զօրութիւն
ունենայ միայն երկու տարուայ ընթացքում, և այդ միջո-
ցում պէտք է շարունակուեն Վատիկանի հետ բանակցու-
թիւնները։

Կառավարութիւնը յոյս ունի միաբանութիւնների մա-
սին ընդհանուր օրէնքի նախագիծը առաջարկել մինչև
յիշուած ժամանակամիջոցի լրանալը։

Վիճէլմ II կայսրի այցելութիւնն ու նառը
Բէյրոնեան բենեֆիլիսեանների վանքում

Մինչդեռ այսպիսի անբարեացակամ՝ վերաբերմունք
է ցոյց տրուում կաթոլիկ միաբանութիւններին կաթոլիկ
Սպանիայում, բողոքական պետութեան բողոքական թա-
գաւոր Վիճէլմ II կայսրն այցելելով Բէյրոնեան կաթոլիկ
միաբանութեանը, որին նուիրել էր մի քանի ժամանակ
առաջ խաչելութիւն՝ եկեղեցում կանգնեցնելու համար,
գովարանել է Բենեգիկտեաններին, «որ նրանք ոչ միայն
ձգտել են պահպանել և հաստատել կրօնքը, այլ և հան-
դիսացել են քաղաքակրթողներ եկեղեցական երգեցողու-

թեան, գեղարուեստի և գիտութեան շրջանում, և շարունակել է.

«Ես ձեզնից սպասում եմ, որ ձեր նախորդների շառավոր կը շարունակեք աշխատել, և ինձ զօրաւիգն կը լինէք ժողովրդի կրօնքը պահպանելու ջանքերիս մէջ։ Այս մանաւանդ կարեոր է, որովհետեւ 20-րդ դարը բերեց մտքեր և մաքառումներ, որոնց կարելի է յաղթանակել միայն կրօնքի օդնութեամբ և բարձրից ցոյց տրուած հովանաւորութեամբ։ Թագը, որ կրում եմ, միայն այն ժամանակ կարող է ապահովել այստեղ յաջողութիւնը, եթէ նա հիմնուած լինի Աստուծոյ և նրա խօսքի վերայ։ Դրա համար էլ կանգնեցի այս եկեղեցում խաչ, որ ցոյց տամ, ինչպէս ասել եմ նաև մակումս, թէ քրիստոնեայ իշխանները կարող են կառավարել միայն Աստուծոյ կամքին համեմատ, և թէ նրանք պարտաւոր են օդնել ամրապնդելու գերմանացիներին յատուկ քրիստոնէական գաղափարը, և մեծացնելու երկիւղածութիւնը սեղանի (եկեղեցու) և գահի (իշխանական) տուած՝ որոնք շաղկապուած են իրար հետ և չեն կարող բաժանուած լինել։

Կարոլիկութիւնը մերձաւոր արեւելքում.

Լատին և բողոքական քարոզութիւնը մերձաւոր աշրեելքում, այն է Բալկանեան թերակղզում, Փոքր Ասիայում, Հայաստանում, Սիրիայում, Պաղեստինում, Միջագետքում և Պարսկաստանում ընդարձակ ծաւալ է ստացել։ Մեծ յաջողութիւն ունեն մանաւանդ լատին քարոզիչները։ Այժմ յիշուած երկրներում գործում են 3870 քարոզիչներ, որոնցից 1850 քահանայ, 1650 աշխարհական և 370 կրօնաւորներ են։ Կաթոլիկների թիւը այդ երկրներում մինչև 990,479 է, քարոզիչների կայաններն են մինչև 1360, որոնցից 624-ը՝ գլխաւոր և 736-ը՝ երկրորդական։

Լատին բանակի այս կարգաւորեալ գործունէութիւնը, տառամ է Շերք, Յնչեա, բացառապէս ուղղուած է պրաւոսաւաւ եկեղեցու և մի քանի գաւանութիւնների դէմ, որոնք

անջատուած են քրիստոնէական եկեղեցու օրթոդոքս միութիւնից շատ հին ժամանակներում և մինչև այսօր էլ պահում են իրանց գոյութիւնը:

Մահմետականութեան վերաբերութեամբ լատին քառողիները առ այժմ սպասողական գրութեան մէջ են, սպասելով թէ տաճկաց նոր սահմանադրութիւնը ինչ ուղղութիւն կը ըռնի մահմետականների կրօնական հայեացքների մասին և յիրաւի, խզի ազատութիւնը ու ընդհանուր հաւասարութիւնը կարմատանան նոր քաղաքական կազմի մէջ:

Իւր ուժերը ըստ յարմարութեան գասաւորելով Արեւելքում, լատին քարոզութիւնը ներկայումս իւր ուշադրութիւնը կենդրոնացրել է Աւստրիայի նոր իւրացրած Բանիայում, որին պապական գործիները արդէն կաթոլիկ երկիր են հրատարակել և գոչում են, որ կաթոլիկութեանը այսեղ վտանգ է սպառնում յատկապէս պրաւօնաւների կողմից:

Լատինների ձգտումն է Բոսնիայում հաստատել գերման գաղթականութիւն, և իրանց ձեռքն առնել ժողովրդի լուսաւորութեան գործը, կաթոլիկական գպրոցներ հաստատելով։ Այս մասին բաւական յաջողութիւն արդէն ձեռք են բերել Լատին քարոզութեան նպատակն է այժմ կ. Պօլսում, որպէս յունականութեան կննդրոնում մի հոգևոր բարձրագոյն ուսումնարան բանալ, որ Բէյրութի եզրուիտական համալսարանի հետ զուգահաւասար գործէր և հակագրէր բողոքականների Յօքերտ-Կոլեջին, որ բացուած է կ. Պօլսում 1863 թուին և Թիւրքիայի պրաւօնաւագդաբնակութիւններից բաւական պրաւօնաւ ուսանողներ է գրաւում։

Կաթոլիկ, այն էլ քարոզական ուղղութեամբ, համալսարանը մեծ չարիք է լինելու արեելեան քրիստոնեաների համար և Արք. Յնշտ. խորհուրդ է տալիս ամենայն ուժով ջանալ խափանել այն։